«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն



Հաստատում եմ՝

Ռեկտոր՝ Է.Մ. Սանդոյան

№ 9

«___» _____ 2026թ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտություն՝ 091801.00.7 Հանրային առողջություն և առողջապահություն

Կրթական ծրագիր՝ 091801.05.7 Թվային առողջապահություն

Համաձայնեցված է՝

Ինստիտուտի տնօրեն

Ռ. Վ. Չախարյան

_____

(ստորագրություն)

Ամբիոնի վարիչ

Գ.Վ. Չալտիկյան

_____

(ստորագրություն)

Կրթական ծրագրի ղեկավար *(առկայության դեպքում)*

Գ.Վ. Չալտիկյան

_____

(ստորագրություն)

1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Թվային առողջապահություն» (դասիչ՝ 091801.05.7) կրթական ծրագիր, իրագործվող «Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության կողմից **«091801.00.7» «Հանրային առողջություն և առողջապահություն» մասնագիտությամբ:**

Մագիստրոսի կրթական ծրագիրը իրագործվում է առկա կրթության ձևով՝ կիրառելով ուսուցման հիբրիդային մոտեցում (հեռավար (առցանց) ուսուցում և տեղական լաբորատորիաներ):

Կրթական ծրագրով ուսումնառության ժամկետը կազմում է 2 տարի:

Մագիստրոսի կրթական ծրագրի ծավալը կազմում է 120 կրեդիտ:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ծրագրի բովանդակությունը, նպատակի և խնդիրների մանրամասն նկարագրությունը, կրթական ծրագրի ակտուալությունը և յուրահատկությունը, տվյալ կրթական ծրագրի/մասնագիտության շրջանավարտների կարիքը աշխատաշուկայում:

«Թվային առողջապահություն» մագիստրոսական կրթական ծրագիրը նորարարական, միջառարկայական և միջազգային լավագույն փորձի հիման վրա ձևավորված ծրագիր է: Ծրագրի նպատակն է Հայաստանի ու արտերկրի կենսաբժշկական և համակարգչային ոլորտներում սովորած ուսանողներին տրամադրել թվային առողջապահության (ԹԱ) ոլորտում տեսական խորը գիտելիքներ, գործնական հմտություններ և մեթոդական կարողություններ՝ հիմնական շեշտը դնելով կառավարական և հետազոտական բաղադրիչների վրա, և շրջանավարտներին պատրաստել Հայաստանում և արտերկրում թվային առողջապահության ոլորտի զարգացման ու կառավարման համար:

Ծրագրի խնդիրներն են՝ ուսանողներին տալ բացառիկ հմտություններ բժշկական տեղեկատվական տեխնոլոգիաների, որոշումների աջակցության, հեռահար բժշկության,

առողջապահության կառավարման, կլինիկական և հանրային առողջապահական ինֆորմատիկայի բնագավառներում, սովորեցնել ստեղծել ու կիրառել նորարարական ԹԱ ծրագրեր և նպաստել առողջապահության բարելավմանը: Ծրագրի հիմնական առավելությունը խորացված գործնական մասնագիտական գիտելիքների ձևավորումն ու համապատասխան հմտությունների և կարողությունների հավաքակազմն է, որը ձեռք է բերվում կոնկրետ նախագծերի և իրական դեպքերի ուսումնասիրության արդյունքում:

Դասընթացները հիմնված են մոդուլային համակարգի վրա: Մոդուլների շրջանակներում սինթեզը և սինխրոնիզացիան ապահովվում են կոնկրետ դեպքերի ուսումնասիրության կիրառման միջոցով: Որպես կանոն, դեպքերի ուսումնասիրությունները, լաբորատոր աշխատանքները, նախագծերը և «թեժ թեմաների» քննարկումները կազմում են մոդուլների մոտավորապես 50%-ը:

Ծրագրի յուրահատկությունը: Աշխարհի առաջատար երկրների փորձից օգտվելու համար կիրառվում է ուսուցման նորարարական հիբրիդային մոտեցում՝ օգտագործելով ինչպես հեռավար (առցանց) կրթությունը, այնպես էլ տեղական լաբորատորիաները: «Թվային առողջապահություն» ծրագիրն իր տեսակի մեջ առաջինն է Հայաստանում, որը կիրառում է այդ մոտեցումները: Բացի հայաստանցի ուսանողներին նոր հնարավորություններ ընձեռելուց, ծրագիրը, որի առանձին դասընթացներ իրականացվում են օտար լեզվով, կներգրավի բազմաթիվ արտասահմանցի ուսանողների Հայաստան՝ ԹԱ ուսուցանելու: Հայաստանի առաջատար համալսարաններում առկա համանման կամ բովանդակային առումով մոտ կրթական ծրագրերը (օր.՝ ՀՌՀ-ի «Կենսաինժեներիա» և «Կենսաինֆորմատիկա», Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Բժշկական կիբեռնետիկա») իրենց բովանդակությամբ և ուղղվածությամբ չեն ապահովում սույն ծրագրով նախատեսված վերջնարդյունքները, և դրանց ավարտին չեն թողարկվում բժշկության ու առողջապահության թվայնացումն ապահովող մասնագետներ:

Ծրագրի ակտուալությունը: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ) արագորեն փոխում են բժշկագիտության ու առողջապահության ոլորտները, իսկ թվային առողջապահության հեղափոխությունն առաջիկայում փոխակերպելու է առողջապահական բնագավառը աշխարհի միլիոնավոր մարդկանց համար: 2019 թ.-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն ընդունեց

ԹԱ ռազմավարությունը (2020-2024 թթ.)՝ առաջարկելով բոլոր անդամ պետություններին խթանել թվային առողջապահության զարգացումը՝ Համընդհանուր առողջապահական ծածկույթի ներդրման նպատակով: Թվային լուծումները (սմարթֆոնների հավելվածներ, էլեկտրոնային տվյալների շտեմարաններ, թվային սենսորներ, արհեստական բանականության գործիքներ և այլն) թույլ կտան զգալիորեն բարձրացնել առողջապահական ծառայությունների արդյունավետությունը, բարելավել բուժման և կանխարգելման արդյունքները, նպաստել բնակչության առողջ կենսակերպի ձևավորմանը: Հեռահար բժշկության արագ աճը, հատկապես կորոնավիրուսային համաճարակի շրջանում, կհանգեցնի նոր աշխատատեղերի ստեղծմանը, հետևաբար ԹԱ մասնագետներն առաջիկա տարիների և տասնամյակների ընթացքում կլինեն ամենապահանջվածներից:

Վերջին տարիներին Հայաստանում գրանցվել են տնտեսական և առողջապահական նվաճումներ, սակայն առողջապահական համակարգը դեռևս բախվում է լուրջ մարտահրավերների, մասնավորապես հեռավոր և գյուղական վայրերում առողջապահական ծառայությունների մատչելիության հարցում: Միաժամանակ երկրում գրանցվում է սմարթֆոնների և ինտերնետի օգտագործման զգալի աճ, սակայն նման տեխնոլոգիական զարգացումները դեռևս արդյունավետորեն չեն օգտագործվում առողջապահական համակարգում: Դրա հիմնական պատճառներից մեկը բարձրորակ մասնագետների բացակայությունն է: Հայաստանը, իր բարձրորակ աշխատուժով և Սփյուռքի լայն հնարավորություններով, կարող է դառնալ թվային առողջապահության ոլորտում համաշխարհային առաջատարներից մեկը: Հայաստանի և Սփյուռքի մի խումբ փորձագետներ (ներառյալ ՀՌՀ գիտաշխատողներին) մշակել են «Հայաստանում թվային առողջապահության կենտրոնի» հայեցակարգը, որն արժանացել է ՀՀ Կառավարության և Առողջապահության նախարարության բարձր գնահատականին: ԹԱ-ն կարող է դառնալ երկրի տնտեսության և առողջապահական համակարգի արդիականացման շարժիչ ուժը և նպաստել ՏՏ, առողջապահության և կրթական ոլորտներում նոր մասնագիտական աշխատատեղերի ստեղծմանը:

Շրջանավարտների կարիքը աշխատաշուկայում: Ծրագրի մշակման ընթացքում կատարվել է պոտենցիալ աշխատաշուկայի հետազոտություն և կազմակերպվել են քննարկումներ գործատուների հետ: Քննարկումների և դրանց վիճակագրական

արդյունքների հիման վրա ակնկալվում է, որ կրթական ծրագրի թիրախ հանդիսացող ոլորտին անհրաժեշտ են տարեկան 15-20 մասնագետներ (մանրամասն՝ տե՛ս բաժին 5):

2.2. Մագիստրոսի կրթական ծրագրի յուրացման մեջ մտնում են ուսումնական և արտադրողական պրակտիկաներ՝

- Ուսումնական պրակտիկայի ձևերը՝ գիտահետազոտական պրակտիկա
- Աշխատանքային պրակտիկայի ձևերը՝ արտադրական (մասնագիտական) պրակտիկա առողջապահական հաստատություններում և ՌԱ ընկերություններում

2.3 Պետական ավարտական ատեստացիայի մասի մեջ կարող են մտնել՝ պետական ամփոփիչ քննություն և մագիստրոսական թեզի պաշտպանություն

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիտելիքները՝

1. Բազային գիտելիքներ. հիմնավոր գիտելիքներ բժշկության և համակարգչային գիտությունների ոլորտներում (համապատասխանաբար՝ տեխնիկական և կենսաբժշկական կրթություն ունեցող ուսանողների համար)՝ նրանց միջառարկայական ՌԱ ոլորտում գիտելիքների և հմտությունների յուրացմանը պատրաստելու նպատակով:
2. Խորացված գիտելիքներ միջազգային և համաշխարհային առողջապահության կառավարման ոլորտում. առողջապահական տարբեր ծառայությունների հիմնադրման և մատուցման մոտեցումներ ու եղանակներ, ազգային ու միջազգային առողջապահական համակարգերի կառուցվածքը, գործառույթները և ֆինանսավորումը:
3. Խորացված գիտելիքներ բժշկական և առողջապահական ինֆորմատիկայի ոլորտում. բժշկական ու առողջապահական տվյալների և տեղեկատվության ներկայացման ու կառավարման մոտեցումներ ու եղանակներ՝ ուշադրություն դարձնելով ստանդարտներին, փոխգործունակությանը, տվյալների ինտեգրմանը և համախմբմանը, արհեստական բանականության եղանակներին:
4. Խորացված կիրառական գիտելիքներ թվային առողջապահության ոլորտում. առողջապահական համակարգերի թվայնացման մոտեցումներ ու եղանակներ՝

ուշադրություն դարձնելով հեռաբժշկության և էլեկտրոնային առողջապահության ծառայություններին:

5. Խորացված գիտելիքներ ապացուցողական բժշկության և առողջապահության տվյալների վերլուծության ոլորտում. առողջապահական հետազոտությունների նախագծման, անցկացման և մեկնաբանման մոտեցումներ ու եղանակներ, ներառյալ վիճակագրական և վերլուծական ժամանակակից մեթոդները:

Հմտությունները՝

- ***գիտելիքի կիրառման հմտությունները՝***

1. իրականացնել և ներկայացնել առողջապահական համակարգի համապարփակ վերլուծություն և գնահատում՝ վերհանելով ոլորտների թերությունները, բացահայտել համակարգի բարելավմանն ուղղված հնարավոր ՌԱ մոտեցումները և լուծումները,
2. իրականացնել և ներկայացնել կոնկրետ առողջապահական հիմնախնդրի լիարժեք վերլուծություն ու բացահայտել խնդրի հնարավոր ՌԱ լուծումները,
3. օգտագործել համակարգչային մեթոդներ բժշկական և առողջապահական ոլորտին վերաբերող հատուկ առաջադրանքներ կատարելու նպատակով,
4. նախագծել և օգտագործել նախատիպային առողջապահական տեղեկատվական համակարգ, ձևակերպել տեխնիկական պահանջներ, պարզել անհրաժեշտ ռեսուրսները, սահմանել տեխնիկական բնութագրերը, կառուցել կամ ձեռք բերել անհրաժեշտ կարողություններ,
5. աշխատել ոլորտում կիրառվող բժշկական տվյալների ստանդարտներով, դասակարգումներով և տերմինաբանական համակարգերով,
6. իրականացնել և ներկայացնել էլեկտրոնային առողջապահական համակարգի համապարփակ վերլուծություն և գնահատում՝ կենտրոնանալով նրա թերությունների վրա, բացահայտել համակարգի բարելավման հնարավոր մոտեցումները և լուծումները,
7. իրականացնել և ներկայացնել ՌԱ համակարգի, ծառայության, նախագծի կամ ծրագրի համապարփակ վերլուծություն և գնահատում՝ կենտրոնանալով նրա թերությունների վրա, բացահայտել բարելավման հնարավոր մոտեցումները և լուծումները,

8. ՌԱ ոլորտում անցկացնել և ներկայացնել լավագույն օրինակների վերլուծություններ և շուկայի հետազոտություններ,
9. նախագծել և ներդնել նախատիպային ՌԱ համակարգ, ծառայություն, նախագիծ կամ ծրագիր առողջապահական հաստատության, համակարգի կամ ընկերության համար,
10. վերլուծել և գնահատել ՌԱ ոլորտում բիզնես հարաբերությունները և զարգացնել ձեռնարկատիրական մոտեցումները,
11. վերլուծել գիտական հետազոտությունների արդյունքները և ներկայացնել դրանք գիտական զեկույցների կամ հրապարակումների տեսքով՝ պահպանելով մտավոր սեփականության իրավունքների չափանիշները,
12. նախագծել, իրականացնել, հրատարակել և ներկայացնել գիտահետազոտական աշխատանքներ ՌԱ, ՏՏ և առողջապահության կառավարման ոլորտներում:

- ***ընդհանրական իմացական հմտությունները*** ՝

1. կիրառել մասնագիտական տերմինաբանությունը ՌԱ, հեռահար բժշկության, բժշկական և առողջապահական ինֆորմատիկայի, միջազգային և հանրային առողջապահության կառավարման ոլորտներում հայերեն և օտար լեզուներով (անգլերեն, ռուսերեն),
2. աջակցել, ստեղծել և իրականացնել տարատեսակ կրթական գործունեություն նշված ոլորտներում հայերեն և օտար լեզուներով (անգլերեն, ռուսերեն),
3. ոլորտի վերաբերյալ սահուն խոսել, գրել և բանակցություններ վարել հայերեն և օտար լեզուներով (անգլերեն, ռուսերեն),
4. լուծել կիրառական խնդիրներ՝ օգտագործելով ինչպես հիմնական, այնպես էլ բարդ մեթոդներ,
5. ուսումնասիրել և մեկնաբանել մասնագետների գիտական նյութերը և դրանք կիրառել ամենօրյա իրավիճակներում (տարբեր հաստատություններում կամ ընկերություններում),
6. ինքնուրույն ձևակերպել գիտական առաջադրանքներ տեսական և փորձնական հետազոտությունների համար՝ տիրապետելով այնպիսի տեսական հիմունքների, որոնք հնարավորություն կտան ուսումը շարունակել ասպիրանտուրայում կամ աշխատել գիտական ոլորտներում,

7. տեղյակ լինել ՌԱ ոլորտի տարբեր շահագրգիռ կողմերի մասին և հաշվի առնել նրանց նպատակները ռազմավարական ծրագրեր մշակելիս:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- ***ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝***

1. ծավալել ձեռնարկատիրական գործունեություն, ձևակերպել բիզնես ռազմավարություն, մշակել բիզնես մոդելներ և հիմնել ընկերություններ,
2. կազմակերպել թիմային աշխատանք և ցուցադրել առաջնորդի (լիդերի) հմտություններ միջառարկայական համագործակցության մեջ,
3. համապատասխանեցնել գործողությունները էթիկական, էկոլոգիական, սոցիալական և տնտեսական արդի պահանջներին,
4. գնահատել սեփական ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև ազդեցությունը ուրիշների վրա,
5. նպաստել կոնֆլիկտների լուծմանը և ըմբռնումով մոտենալ քննադատություններին,
6. գիտակցել ցկյանս ուսումնառության անհրաժեշտությունը և ձեռք բերել համապատասխան հմտություններ:

4. Կրթական ծրագրի շրջանավարտների ակնկալվող մասնագիտական գործունեության տեսակները

ՌԱ կրթական ծրագրի շրջանավարտները տարբեր դերակատարումներ կունենան հիվանդանոցների և այլ բժշկական ու առողջապահական հաստատությունների թվայնացման գործում: Քանի որ ՌԱ-ն նոր զարգացող արդյունաբերություն է, շրջանավարտները պատրաստ կլինեն նաև լիարժեք ձեռնարկատիրական գործունեություն ծավալել այս ասպարեզում և մշակել սեփական բիզնես ծրագրեր: Շրջանավարտները կարող են ունենալ հաջող կարիերա հետևյալ ուղղություններով՝

- **ՌԱ նախագծերի և ծրագրերի կառավարում.** բարձր մակարդակի աշխատանք կառավարման ոլորտում պետական կամ մասնավոր կազմակերպությունների համար, որն իր մեջ ներառում է ծրագրերի նախագծում, մշակում, իրականացում, մոնիտորինգ և հաշվետվություն:

- **ԹՀ արտադրանքի և ծառայությունների մշակում և զարգացում.** բարձր մակարդակի աշխատանք՝ հիմնականում մասնավոր կազմակերպությունների համար. ԹՀ տարբեր արտադրանքի նախագծում, արտադրություն և շուկայում հաստատում (պարզ սմարթֆոնային հավելվածներից մինչև արհեստական բանականություն):
- **ԹՀ կրթական և հետազոտական գործունեություն.** աշխատանք պետական և մասնավոր բուհերում, լաբորատորիաներում, հետազոտական և զարգացման խմբերում կամ ընկերություններում, ԹՀ ոլորտում դասավանդման գործընթացի և գիտական հետազոտությունների աջակցում կամ ղեկավարում:
- **ԹՀ կարգավորում և խորհրդատվություն.** աշխատանք պետական մարմիններում և մասնավոր հաստատություններում (օր.՝ ապահովագրական ընկերություններում), խորհրդատվական ծառայությունների մատուցում նրանց ԹՀ ռազմավարության և կիրառման մոտեցումների վերաբերյալ:
- **ԹՀ ստորաբաժանումներ և բաժանմունքներ.** բարձր մակարդակի աշխատանք առողջապահական հաստատություններում և դրանց ՏՏ բաժանմունքներում՝ ղեկավարելով կամ աջակցելով նրանց ամենօրյա ԹՀ գործընթացներին և գործողություններին:
- **ԹՀ նորարարություն և ղեկավարում.** շրջանավարտները ակնկալվում է, որ կդառնան ԹՀ ոլորտի ազգային և միջազգային բարձրորակ մասնագետներ՝ աշխատանք ծավալելով Հայաստանում և ամբողջ աշխարհում ԹՀ զարգացման ուղղությամբ:

5. Կրթական ծրագրի պահանջարկը

Կրթական ծրագրի շրջանավարտները հաջողություններ կունենան տարբեր հաստատություններում և կազմակերպություններում, ինչպիսիք են հիվանդանոցային և առողջապահական համակարգերը, առողջապահական տեղեկատվական ֆիրմաները, գիտահետազոտական լաբորատորիաները, ապահովագրական ընկերությունները, հանրային առողջապահական կազմակերպությունները, բուհերը կամ ինստիտուտները, հասարակական կամ կառավարական կազմակերպությունները: Այս ոլորտում զբաղվածությունն արագորեն աճում է, քանի որ ավելի ու ավելի շատ ԹՀ ծառայություններ են ձևավորվում:

Կրթական ծրագրի մշակման ընթացքում կատարվել է պոտենցիալ աշխատաշուկայի հետազոտություն և կազմակերպվել են քննարկումներ գործատուների կարիքների և շրջանավարտների հնարավոր աշխատատեղերի վերաբերյալ: Հաստատվել է այն գիտական հաստատությունների, պետական կառույցների և արտադրական ընկերությունների շրջանակը, որոնք այժմ իսկ ունեն ծրագրի շրջանակներում պատրաստվելիք մասնագետների կարիք, մասնավորապես՝

- ՀՀ առողջապահության նախարարությունը և հարակից բժշկական կառույցները,
- Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական «ԱՐՄԵԴ» համակարգը,
- առնվազն 3 խոշոր բազմապրոֆիլ հիվանդանոցներ Հայաստանում,
- առնվազն 3 մասնավոր առողջապահական կլինիկաներ Հայաստանում,
- առնվազն 3 հիմնական բարձրագույն ուսումնական հաստատություններ Հայաստանում,
- առնվազն 2 հետազոտական հաստատություններ, որոնք հետաքրքրված են Հայաստանում ՌԱ ոլորտով,
- առնվազն 12 ՌԱ ընկերություններ Հայաստանում և աշխարհում,
- «Տելեբժշկության հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը:

Վերը նշված կառույցների հետ քննարկումների և դրանց վիճակագրական արդյունքների հիման վրա ակնկալվում է, որ կրթական ծրագրի թիրախ հանդիսացող ոլորտին անհրաժեշտ են տարեկան 15-20 մասնագետներ: